

ԵՎՍ ՄԻ ԱՆԳԱՍ ԱՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ
ԱՆՁԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ԱՆՆԱ ԱՐԵՎԵՍՏՅԱՆ

Անցյալ դարի 70-ական թվականների սկզբից հայագիտության մեջ ծայր է առել մի տեսակետ կամ ավելի ճիշտ՝ վարկած, որի համաձայն հայ իրականության պատմության մեջ եղել են Ստեփանոս Սյունեցի անունով երկու անձ՝ Ստեփանոս Սյունեցի Առաջին, իբր V դ. ապրած և Ստեփանոս Սյունեցի Երկրորդ, VIII դ. բոլորին հայտնի քերական, փիլիսոփա, թարգմանիչ, շարականագիր և երաժշտության տեսաբան: Վարկածի հեղինակն էր վաստակաշատ երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանը, որն այդ հարցին նվիրված ծավալուն հոդված հրապարակեց¹, հետագայում ևս, իր բոլոր աշխատություններում², Հայկական սովետական հանրագիտարանում³ և այլուր⁴ տարածելով այդ վարկածը:

Սակայն ի մոտո ծանոթանալով և ուսումնասիրելով վերոնշյալ հարցը, մենք եկել ենք այլ տեսակետի, որը հայագիտության մեջ թեև նոր չէ, բայց կարծես մոռացության է տրված: Ուստի անհրաժեշտություն ծագեց ներկայացնելու Ստեփանոս Սյունեցու հայ հոգևոր երգարվեստի ու նրա սեսությունների մեջ կարևոր ներդրումն ու վաստակը, ներգրավելով ինչպես հին, արդեն արտահայտված կարծիքներ, այնպես էլ լրացուցիչ նոր սովորույթներ:

Մեր միջնադարյան բոլոր մատենագիրներն ու պատմիչները գրեթե միահամուռ են Ստեփանոս Սյունեցուն՝ իբրև երաժշտի վերաբերող իրենց հաղորդած տեղեկությունների մեջ: Այսպես, եթե հետևենք ժամանակագրական կարգին, ապա Ստեփանոս Սյունեցու մասին վկայող ամենավաղ կարևոր տեղեկությունները ասկա են հենց իր իսկ վարքում, որը, ինչպես հայտնի է, ունեցել է երեք խմբագրություն և ի մի բերվել Մխիթար Այրիվանեցու ձեռքով: Ահա թե ինչ ձևով են այդ տեղեկությունները հասել մեր օրերին. «... արար եւ շարականս աւագ օրհնութիւններն զէ. ձայնին և վառին մնաց, որ տէր Ներսէս ասաց ի նոյն ոճ բանիցն»⁵:

Մասինաղբական տարբեր աղբյուրների հաղորդած տեղեկություններից առանձնանում է Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը. «Բաժանեաց եւ

¹ Ն. Թ ա հ մ ի գ յ ա ն. Սյունեցի երկու համանուն հրաժիշտները և Հարություն Ավագ Օրհնությունները. - «Էջմիածին», 1973, № 2, էջ 29-43:

² Н. К. Т а г м и з я н. Теория музыки в древней Армении. Ереван, 1977, с. 50, 52, 81-87, 95, 105, 141, 142, 165-167; о н ж е. Шарахан. Из армянской поэзии V-XV вв., Ереван, 1990, с. 6, 42-46, 205-206; см. там же: С. З о л я н. О поэтике шараханов (замечки переводчика), с. 174.

³ Հայկական սովետական հանրագիտարան. Հ. 11, Երևան, 1985, էջ 137-138:

⁴ Ն. Թ ա հ մ ի գ յ ա ն. Ոսկեփորիկ. Երևան, 1980, ն ու յ ն ի՝ Ոսկեփորիկ. Լոս Անջելես, 1995:

⁵ Փ. Յ ո վ ս ե փ ե ա ն. Մխիթար Այրիվանեցի. Երուսաղէմ, 1931, էջ 20:

զուլթն ձայնս եւ կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնս, երգեաց և կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ ստողոգին Յինանց յոյժ խորհրդավոր, եւ զպահոցն, որ զաղուհացսն երգի»⁶: Իսկ Կիրակոս Գանձակեցին գրել է. «Արար եւ երգս հոգեւորս քաղցր եղանակա շարականս եւ կցուրդս եւ այլ երգս»⁷: Ուշագրավ է նաև միջնադարյան «ձայնից» մեկնութիւններին մեկի խորագիրը. «Բարսղի Կեսարեցւոյն ասացեալ յաղագս ձայնից, զոր թարգմանեալ է Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զի նա եղեւ երաժիշտ Հմուտ ամենայն ձայնից եւ բաժանեաց զձայնն ի մասունս եւ եղ զյարուկայք ձայնին»⁸:

Ըստ վերը բերված մատենագրական աղբյուրների, ակնհայտ է դառնում Ստեփանոս Սյունեցու Հսկայական դերը, որի հետ է կապված Ութ-ձայն Համակարգի բարեկարգումը («բաժանեաց եւ զուլթն ձայնս...»), ինչպես նաև եկեղեցական տոներին նվիրված 8-9 երգերից բաղկացած կանոնի ժանրի ներմուծումը («...կարգեաց շարեաց զՅարութեան օրհնութիւնս...»), խաղային նշանների նախնական կիրառութեան դործընթացը («... եւ եղ զյարուկայք ի վերայ ձայնին...»):

Կանոնի ժանրի ներմուծման նախնական փուլը կապված է Ստ. Սյունեցու կողմից Հարության Ավագ Օրհնութիւններին ութ ձայնեղանակներով երգվող ութ մեծ շարքերի ստեղծման հետ, որոնք երգվում են Նոր կիրակիից մինչև Հոգեգալուստ՝ հաջորդաբար օրը մի կարգ⁹: Տվյալ երգաշարքերը հսկան որոշ հատկութիւններով սկզբունքորեն տարբերվում են ոչ միայն պարզագույն արխաիկ կցուրդներից, այլև ընդհանրապես շարականների ճնշող մեծամասնութիւնից: Բյուզանդական պաշտոնեղութեան մեջ դրանց համապատասխանում են αναστασημειναι կոչվող օրհներգերը, որոնք նույնպես ստեղծվել են VII-VIII դդ.:

Հարության Ավագ Օրհնութիւնները կազմող ութ շարքերից յուրաքանչյուրը բաղկացած է Հին կտակարանի 10 մարգարեական օրհնութիւնների հիման վրա կաղապարված մասերից: Օրհնութիւններ, որ հնուց ի վեր հայ եկեղեցին ներմուծել էր ժամերգութեան մեջ: Մարգարեական օրհնութիւնները ժամանակին կցվել են սաղմոսականոններին և ունեցել վառ արտահայտված երգային զարդուրուն մեղեդային նկարագիր, սակայն հետագայում չեն պահպանվել ժամասացութեան մեջ.

1. Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ (Ել. 15)
2. Նայեցարուք, երկինք, եւ խոսեցայց, եւ լուհիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ (Բ Օր. ԼԲ 121)
3. Ձի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ (Բ Օր. ԼԲ 22-28)
4. Ծաներո՞ւք եւ տեսեք, զի ես եմ, եւ ոչ գոյ Աստուած բաց յինէն (Բ Օր. ԼԲ 39-43)
5. Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, եւ բարձրացաւ եղջիւր իմ Աստուած փրկիչ իմ (Ա Թագ. Գ 110)

⁶ Ս տ. Օ Ր ք ե լ ե ա ն. Պատմութիւն նահանգին Սիսական. Թփղիս, 1910, էջ 138-139:
⁷ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 72:

⁸ Մալոցի անվ. Մատենագարան, ձեռ. 3276, էջ 86ա:

⁹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Շարական. Հ. Ա., Երևան, 1997, Առաջաբան (հեղ. Ա. Արևշատյան, Լ. Հակոբյան), էջ XIII-XIX:

6. Ի գիշերաց կանխէ Հոգի իմ առաւօտ առնել առ Քեզ, Աստուած (Ես. ԻԶ 9)

7. Եւ ասացի ի վերանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացից ես ի գրունս գժոխոց (Ես. ԼԷ 10-14)

8. Օրհնեցէ՛ք զԱստուած յօրհնութիւն նոր, զի իշխանութիւն Նորա ի բարձունս փառաւորի (Ես. ԽԲ 10-13)

9. Ի հեղութեան իմում ես առ Տէր կարգայի, եւ լուաւ Աստուած յանդնդոյ գժոխոց ազաղակի իմում (Յովն. Բ, ԻԹ)

10. Տէ՛ր, զլուր Քո լուայ եւ եկեայ. Տէ՛ր, նայեցայ ի գործս Քո եւ զարհուրեցայ (Ամբ. Գ):

Ինչպես տեսնում ենք, սրանք 10-ական մասերից բաղկացած 8 խոշոր շարքեր են, որ նախատեսված են 8 եղանակներով երգելու համար: Բնորոշ է այստեղ «խիստ ոճի» Ութձայնին հետեւելու սկզբունքը (չորս բուն և չորս կողմ հղանակ՝ առանց դարձվաքների և ստեղծիների), ինչը հաղորդում է դրան յուրահատուկ փոքրածավալ առանձին համաբարձուր նշանակություն (համեմատելի հունական «ՕΚΤΩΗΧΟΣ» երգչական գրքի հետ), որտեղ փաստորեն հաստատվում է Ութձայնի դադափարը: Սրա հիման վրա բյուրեղացավ Շարակնոցի կանոնի հայկական տարատեսակը, որն րնդվրկում է 8-9 երգ¹⁰:

Ավազ Օրհնություններում ակնհայտ է նաև պոետիկայի ոլորտում արխաիկ կյուրդների համեմատությամբ տեղի ունեցած առաջընթացը: Այստեղ արդեն խոսք չկա քրիստոնեական կրոնի գլխավոր դավանաբանական դրույթների թեղիսային, հանրամատչելի շարադրանքի մասին. շարականագիրը ցուցաբերում է բարձր մակարդակի համապարփակ, ասոցիատիվ աստվածաբանական մտածողություն, ամբողջ սրբազան պատմությունը համակարգելու, ի մի բերելու ձգտում: Վերջինս այստեղ ներկայացված է իրեն խորհրդանշական փոխադարձ կապերով ու զուգահեռներով հագեցված ինքնամփոփ, կայուն ամբողջություն:

Սակիանոս Սյունեցուց հետո ասոցիատիվ բանաստեղծական ոճը լայն ու բաղմակողմանի զարգացում է ստանում հետագա դարերի հեղինակների մոտ՝ իր պագաթնակետին հասնելով XII-XIII դդ. շարականագիրների ստեղծագործության մեջ¹¹:

Իսկ ի՞նչ աղբյուրների վրա է հիմնվել Նիկ. Թահմիդյանը երկու համանուն երաժիշաների վարկածն առաջ քաշելիս:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ հայտնի են տարբեր հեղինակների կողմից ստեղծված շարականագիրների ցուցակները¹², որոնցից հնագույնն է Վանական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» ձեռնարկում գետեղված ցուցակը¹³: Նմանատիպ ցուցակների հեղինակներ

¹⁰ Նույն տեղում, էջ XIX, տե՛ս ծանոթագրությունը: Տե՛ս նաև A. S. Arév s a t - y a n. Deux textes arméniens attribués a Basile de Cesarée sur l'Interpretation des modes musicaux. - "Revue des Etudes Arméniens", (այսուհետև՝ REArm) 26, 1996-1997.

¹¹ Շարական. Առաջաբան, էջ XIX:

¹² Հ. Ա ն ա ս յ ա ն. Հայկական մատենագրություն. Հ. Ա, Երևան, 1959, էջ LXXI-LXXIV:

¹³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Յակոբեանց վանքի. Հ. Դ, աշխ. Նորայր եպս. Պողարեան. Երուսաղէմ, 1965, էջ 485:

են Սարգիս Երեցը, Գրիգոր Տաթևացին, Անանունը¹⁴: Շարականագիրներին նվիրված չափածո երկեր են ստեղծել Առաքել Սյունեցին, Ստեփանոս Ջիգ Ջուղայեցին, Հակոբ Սսեցին¹⁵: Ուշադիր հետևենք նշված հեղինակների հաղորդած տեղեկություններին: Դրանց ճնշող մեծամասնությունը միա-համուռ Ավագ Օրհնությունների հորինումը ընծայում է Ստեփանոս Սյունեցուն: Այն հանգամանքը, որ նրանք նկատի ունեն VII–VIII դդ. ապրած մատենագիր եպիսկոպոսին, հետևում է նաև հեղինակների որդեգրած ժամանակագրական կարգից, որի համաձայն հիշատակվում են հայ հոգևոր երգարվեստի երախտավորները սկսած Մաշտոցից և Սահակից մինչև Կիրակոս Երզնկացի: Մեջբերենք խնդրո առարկա հեղինակին վերաբերող մասերը միայն:

Վանական վարդապետ. «ՁՅարութեան Աւրհնութեանն է ձայնն՝ Ստեփաննոս Սիւնեցին, եւ զՎառն Ներսէս Կաթողիկոս»¹⁶:

Սարգիս Երեց. «ՁՅարութեան աւրհնութեներն զիււթն ձայնին, զՍրբութիւն սրբոցն Ստեփաննոս Սիւնեցին ասաց»¹⁷:

Գրիգոր Տաթևացի. «Ձաւագ օրհնութիւնք զէ ձայնին Ստեփաննոս Սիւնեցին»¹⁸:

Առաքել Սյունեցի. «Յազթող բանիւ երանելին՝ Տեր Ստեփաննոսըն Սիւնեցին»¹⁹:

Ստեփանոս Ջիգ Ջուղայեցի. «Եւ զօրհնութիւնս որ մեծ կոչին՝ Սուրբ Ստեփաննոսըն Սիւնեցին»²⁰:

Հակոբ Սսեցի. «Էրեց Յոհան (Հովհ. Վանական) այսպէս իմայ՝
Աւագ օրհնութեներն որ կայ,
Ձայն եօթն Սիւնեաց Ստեփաննոսաց,
Սուղ թէ մընաց նըշան չըկայ»²¹:

Անանուն խմբագրություն, XVIII–XIX դդ. «Ստեփաննոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց, զեօթն ձայնս աւագ օրհնութեանց»²²:

Ահա այս մեջբերումների ցուցակն ամփոփող Անանուն խմբագրության հաղորդած տեղեկությունն է Թահմիզյանի աղբյուրը: Ի՞նչ կարևոր եզրահանգումների է հասել Թահմիզյանը: Նա վերագրել է Ստեփանոս Սյունեցու (Երկրսրդի) ողջ վաստակը, այն է՝ Հարություն Ավագ Օրհնությունների ստեղծումը՝ 80 երգ (!) Ստեփանոս Սյունեցի Առաջինին: Հայտնի է, որ Ավագ Օրհնությունների ստեղծումը ազդարարում էր բյուզանդական հիմներգական կանոնի, որպես VIII դ. առաջատար հիմներգական երաժշտաբանաստեղծական տեսակի մուտքը հայ շարականերգություն: Տվյալ տեսակը ձևավորվել է VIII դ. ոչ շուտ, Անդրեաս Կրետացու և ապա՝ Կողմա Մայրամացու և Հովհաննես Դամասկացու ստեղծագործության մեջ: Բնա-

¹⁴ Հ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ LXV-LXIX

¹⁵ Նույն տեղում, էջ LXIX-LXXIV:

¹⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Յակոբեանոյ վանքի, էջ 485:

¹⁷ Հ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ LXVI:

¹⁸ Նույն տեղում, էջ LXVII:

¹⁹ Նույն տեղում, էջ LXIX:

²⁰ Նույն տեղում, էջ LXXI:

²¹ Նույն տեղում, էջ LXXIV:

²² Նույն տեղում, էջ LXVIII:

կան է, որ գիտելիքները կատարելագործելու և ընդլայնելու նպատակով Կոստանդնուպոլիս մեկնած Ստեփանոս Սյունեցին, հաղորդակից դառնալով ընդհանրական եկեղեցական երգաստեղծության նորագույն ձևաբերումներին, հայկական հիմներդական կանոնը ստեղծելիս, որպես չափանմուշ օրինակ նկատի է ունեցել հենց Անդրեաս Կրետացու 10 երգից բաղկացած շարքը: Այսինքն՝ նույնիսկ զուտ մշակութաբանական կտրվածքով, կանոնը, որպես երևույթ ղոյուլթյուն էի ունեցել V դ.²³: Հետևաբար, խեղաթյուրվել է իրական Ստեփանոս Սյունեցու երաժշտագիտական վաստակի խնդիրը: Թաճմիղյանը նրան վերապահել է բավական համեստ մի դերակատարում՝ արդեն շրջանառության մեջ եղած շարականների վերակարգավորումն ըստ Ութձայնի (այդպես է նա մեկնաբանում Ստ. Օրբելյանի «կարդեաց շարեաց» արտահայտությունը), որոնք ի մի էին բերված, հավանաբար, Բարսեղ Ճոնի «Ճոնրնտիր» երգարանում և «Մեկնութիւն քերականին» երկասիրության միջի երաժշտությանը վերաբերող ասույթները: Նորարար բեղուն ստեղծագործողի, բարենորոգչի դերն ամբողջութամբ ընծայվել է V դ. ենթադրյալ Ստեփանոս Սյունեցուն:

Սակայն ուշադիր քննելով Անանուն խմբագրությունը, կարելի է եզրակացություն անել, որ Ստեփանոս Սյունեցի Առաջին և Երկրորդ նշելով, ցուցակի հեղինակը, բացի VIII դ. Ստեփանոս Սյունեցուց, նկատի է ունեցել մյուս հիշատակվող շարականադիր Ստեփանոսին, Մոկացի կամ Ապարանցի եպիսկոպոսին, որն ապրել է X դ. և, որի հեղինակած «Սրբութիւն սրբոց» անվանական ծայրակապով 983 թ. հորինված շարականը՝ Բյուզանդիայի Վասիլ կայսրի նվիրաբերած մի քանի նշանավոր սրբությունների և Ապարանցի իսաչի կապակցությամբ, շարականագիրների ցուցակի որոշ հեղինակների կողմից վերագրվել է Ստեփանոս Սյունեցուն, դարձնելով նրան Ավագ օրհնությունների և «Սրբութիւն սրբոց» շարականի հեղինակ: «Ստեփանոս Սիւնեցի երկրորդն՝ զՍրբութիւն սրբոց Խաչին, զոր ոմանք Ստեփանոսի Մոկացի եպիսկոպոսի տան, որ Ապարանցի ևս կոչի»²⁴: Սակայն, որոշ հայտնություններ հստակորեն զանազանել են այդ երկու շարականագիրների հեղինակումները, ինչպես, օրինակ, Հ. Ղ. Ալիշանը, որը նշել է. «Սիւնեցի եւ Մոկացի Ստեփանոսեանց»²⁵: Այդ դեպքում, իրոք, ունենք Ստեփանոս անունով երկու նշանավոր շարականագիր, բայց ոչ Սյունեցի մականունով: Պարզվում է, որ Անանուն խմբագրության երկու Ստեփանոս շարականագիրների մասին վկայող հատվածները Թաճմիղյանի կողմից սխալ են մեկնաբանվել, հավանաբար, նաև Մ. Չամչյանի կարծիքի ազդեցությամբ, որի համաձայն «Աւագ Օրհնութիւնները կրնան զրուած ըլլալ Ե. դարու Ստեփանոս Սիւնեցիէն, եւ կանոնի վերածուած՝ Ը. դարու Սա. Սիւնեցիէն»²⁶: Իրականում, խոսքն այստեղ ոչ թե V և VIII դդ. հեղինակների մասին է, այլ՝ VIII և X դդ., այսինքն՝ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի և Ստեփանոս Ապարանցու՝ Մոկացի եպիսկոպոսի մասին: Ահա սրանք են «Ստեփանոս Սյունեցի Առաջին» և «Ստեփանոս Սյունեցի Երկրորդ» շարականագիրների տակ հասկացվող հեղինակները:

²³ Այդ մասին մանրամասն անձ Շարական. Հ. Ա, Առաջաբան, էջ XIII-XV, XVII-XIX:

²⁴ Հ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ LXVIII:

²⁵ Տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. Շնորհալի եւ սյարագայ իւր. Վենետիկ, 1873, էջ 82:

²⁶ Մ. Չ ա մ չ յ ա ն. Հայոց պատմութիւն, Հ. Ա, Կ. Պոլիս, 1784, էջ 782:

Ըստ Ղազար Զահկեցի վարդապետի վկայության, Ստեփանոս Սյունեցին «երգեաց զերգս շարականաց քաղցր եւ գեղեցիկ եղանակաւ եւ մեծ խորհրդով: ՋՄննդեան Քրիստոսի, եւ զՄկրտութեան, եւ Եկաւորութեան ի Բեթանիա եւ յԵրուսաղէմ, եւ զՄեծի շաբաթու զՉարչարանացն, եւ զՅարութեան, եւ զՀամբարձմանն, եւ զՀոգւոյն Սրբոյ Գալստեանն, եւ զԵկեղեցւոյ, եւ զԱւագ Օրհնութեան կարգք, բաց ի Վառէն, եւ այլ տօնից տէրունականաց եւ սրբոց բազմաց, զոր մինչեւ ցայսօր պաշտի յԵկեղեցի Հաստանեայց»²⁷: Ըստ էութեան, Ղազար Զահկեցին, քաջ գիտակցելով Ստեփանոս Սյունեցու դերը Շարակնոցի կարգավորման գործում, թվարկում է այն կանոնները, որոնք խմբադրել և հեղինակել է (մասնավորապես, Ավագ Օրհնությունները) Ստեփանոս Սյունեցին:

Հ. Գ. Ավետիքյանը «Բացատրութիւն շարականաց» մեծածավալ աշխատութեան մեջ, անդրադառնալով խնդրո առարկա հարցին, գրել է. «Յօրինող Աւագ Օրհնութեանցս ասի Ստեփանոս Սիւնեցի, որ եկաց ի վերջ եօթներորդ դարուն, բաց ի Վառ ձայնէն՝ զոր ասէն արարեալ Ներսէսի Շնորհալուոյն. ըստ որում յիշէ զայս հետինս Կիրակոս պատմիչ: Բայց ըստ այս թերևս տարակոյս արկանիցէ այն, զի ի Մագիստրոսի թուղթս բերի բան երկրորդ տան իններորդ շարականին. «Որ յաթոս քերովբէական բազմեցաւ ընդ հօր», թեպետ նա ոչ իբրև բան շարականի բերէ զայս»²⁸:

Հ. Ղ. Ալիշանը բազմիցս անգրադարձել է Ստեփանոս Սյունեցու երաժշտական վաստակին. «... Աւագ Օրհնութիւնքն բաւական էին ոչ միայն նմա միայնոյ ի փառս, եթէ և չէր այլ ինչ մնացեալ յերկոց նորին, այլ և Համօրէն ազգի նորին՝ եթէ ջնջեալ ըրաձեալ էր բնաւ այլ դպրութիւն սորա: Ի նշուլից մնացուածոց այգմ միակ դոհարի՝ մարթ էր իմաստասիրել բանագիտաց՝ եթէ ո՛րպիսի և ո՛րքանիս արժան էր յուսալ բանաստեղծս յայնպիսւոյ ազգէ և ի լեզուէ, գոհար, որ արդ և ի միջի ոչ սակաւուց գերծելոց և յայտնի բերոց դպրութեան մերոյ, մանաւանդ ի շարս սրբազան երգոց, գերազանցօրէն փայլէ և փայլեսցէ մինչեւ երգաբանեալն ի նմանէ, Յարուցեալն ի մեռելոց՝ յարուցցէ զննջեցեալսն յուսով՝ յանմահութիւն»²⁹: Իսկ «Շնորհալի եւ պարագայ իւր» աշխատութեան մեջ այսպես է բնորոշել երգահանին. «Ը դարուն սկիզբը Ստեփանոս Սիւնեցին՝ իր դերազանց շարականօքն»³⁰:

Ի դեպ, Ստեփանոս Սյունեցի Առաջինի մասին չի հիշատակում ամենավատահելի հեղինակներից նաև՝ Մ. արք. Օրմանյանը: Նրան հայտնի է մեկ՝ 735 թ. նահատակված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը³¹:

Գնել ծ. վրդ. Գալեմքեարյանը եւ Ավագ Օրհնությունները վերագրում է Ստեփանոս Սյունեցուն, որին և համարում է Օրհնություն շարականի հայ եկեղեցու երգեցողութեան մեջ ներմուծած առաջին հեղինակը³²:

Մ. Արեղյանը, ուսումնասիրելով Հարության Օրհնությունների հեղինակի հարցը³³ և, հատկապես, հիմնվելով Ստ. Օրբելյանի նշված վկայութե-

²⁷ Ղ ա զ ա Ր Զ ա հ կ ե Յ ի. Գիրք որ կոչի Դրախտ ցանկալի. Կ. Պոլիս, 1764, էջ 625:

²⁸ Տե՛ս Բացատրութիւն շարականաց. Վենետիկ, 1814, էջ 672:

²⁹ Ղ. Ա. Լ. ի շ ա ն. Միսական. Վենետիկ, 1893, էջ 128:

³⁰ Ղ. Ա. Լ. ի շ ա ն. Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 89:

³¹ Մ. արք. Օ Ր մ ա ն ե ա ն. Ազգապատում. Հ. Ա, պրակ Բ, Պեյրուսթ, 1912, էջ 862-864:

³² «Տաճար», 1910, էջ 654-656:

³³ Մ. Ա. Բ. Ե. Ղ. յ ա ն. Շարականների մասին. - «Արարատ», 1912, էջ 484-488:

յան վրա, հանգել է այն եզրակացության, թե Ստեփանոս Սյունեցին մեքենայորեն կարգել, շարել է տասր մարգարեական օրհնությունների կցուրդներն իրրեւ Հարություն Օրհնություններ³⁴: Ըստ այդմ, Ստեփանոս Սյունեցին՝ մարգարեական օրհնությունների կցուրդները շարել է որպես Հարություն Օրհնություններ, և նրանց կցելով մասնավոր Հարց (իր գործատունով), Մեծացուցէ, Ողորմեա, Տէր Յերկնից, Ճաշու և Համբարձի շարականները, կազմել է Ավագ Օրհնություն կարգը կամ կանոնը: «Ստեփանոս Սյունեցին, մտցնելով կանոնը, կարող էր ուրիշ կանոնների շարականներ ևս կարգել. «կարգեաց շարեաց շարականս», բայց այդ չգիտենք»³⁵:

Թերևս Աբելյանի ենթադրությունն անհիմն չէ, սակայն անհավանական է թվում, որ մարգարեական օրհնություններին, դատելով բազմաթիվ ձևազարդ ժամագրքերում սլահավանակաձև դրանց խաղաղուսումներից, որոնք վկայում են տվյալ երգասացությունների ծորերգային-զարդուրուն (մեղիմատիկ) մեղեդիական նկարագիրը, կցուրդներ ավելացնելու անհրաժեշտություն առաջանար: Այդ է հուշում ժամասացության երաժշտական ձևավորման տարրական տրամաբանությունը: Անկասկած, Ավագ Օրհնություններն ինքնուրույն և հատուկ նպատակով հորինված երգեր էին:

Շատ ճիշտ է ձևակերպել իրողությունը Հ. Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարանում», գրելով՝ «Ստեփանոս Ա Սիւնեցի եպիսկոպոս Սիւնեաց. Դուրինի աւագերեցի որդին. աշակերտ Մովսէս Սիւնեցու»³⁶:

Մեր օրերում, Մեսրոպ վրդ. Գրիգորյանը, իր «Ստեփանոս Սյունեցի» աշխատության մեջ, գրում է. «Ստ. Սիւնեցիի կենսագիրները, ինչպէս և սուրբի ու ձևագիր շարակնոցներու սիրողը գետնդուած շարականագիրներու ցուցակները, կր վկայեն թէ իր հեղինակութիւնն ևն Քրիստոսի յարութեան յիշատակին նուիրուած Աւագ Օրհնութիւնները»³⁷: Սակայն, մեղբերելով Հայտնի Հայագետների աստիճանները խնդրոս առարկա հարցի վերաբերյալ, Մ. Գրիգորյանն ի վերջո հակվում է Մ. Չամչյանի սխալ տեսակետին:

Նշենք, որ Ստեփանոս Սյունեցուն որպիս VIII դ. շարականագիր և տեսարան են գնահատում նաև մեծանուն երաժշտագետներ Ե. Տնտեսյանը³⁸, Ք. Քուչարյանը³⁹ և Ռ. Աթայանը⁴⁰:

Թերևս մեր տեսակետը հստակ դարձավ ընթերցողին, թեպետ Ստեփանոս Սյունեցու ստեղծագործական ժառանգության հետ կապված դեռ իրենց վերջնական լուծումը չստացած բազում հարցեր կան⁴¹, սակայն դրանք սույն հոդվածի նպատակից դուրս են:

³⁴ Նույն տեղում, էջ 833-834:

³⁵ Հայ գրականության պատմություն. Հ. Ա., Երևան, 1944, էջ 486:

³⁶ Հայոց անձնանունների բառարան. Հ. Դ., Երևան, 1943, էջ 605:

³⁷ Մ. վրդ. Գրիգորյան. Ստեփանոս Սիւնեցի. Պէյրուս, 1958, էջ 40-41:

³⁸ Ե. Տնտեսյան. Նկարագիր երգոց Հայաստանից ս. եկեղեցույ եւ յաւելուած բովանդակութիւն երգոց ըստ ութն ձայնից. Ի. տպգր., Խաթանոյ, 1933, էջ 136:

³⁹ X. C. K y ш а р е в. Вопросы истории и теории армянской монодической музыки. А., 1958, с. 115.

⁴⁰ Ռ. Ա. Աթայան. Հայկական խաղային նոտագրություն. Երևան, 1959, էջ 73-74:

⁴¹ Ինչպես, հավանաբար, նկատեց ընթերցողը, դեռևս միջնադարյան մատենագիրներն ամենուրեք նշել են, որ Ստեփանոս Սյունեցին հեղինակել է միայն յոթ ձայնականների Ավագ Օրհնությունները, իսկ Վառ ձայնին, այսինքն՝ Գ կողմին պատկանող շարականները հորինել է Ներսես Շնորհալին: Վառ ձայնի Ավագ Օրհնությունների ուսումնասիրության հարցով հատուկ զբաղվել է երաժշտագետ Լ. Հակոբյանը, որը տվյալ շարականների տալա-

ЕЩЕ РАЗ К ВОПРОСУ О ЛИЧНОСТИ СТЕПАНОСА СЮНЕЦИ

АННА АРЕВШАТЯН

Р е з ю м е

Анализируя свидетельства армянских историков, данные средневековых списков авторов шараканов, труды известных арменологов, музыковедов-медиевистов, автор статьи приходит к выводу, что гипотеза, выдвинутая в свое время Н. Тагмизяном (см. журн. "Эчмиадзин", 1973, N 2) о существовании двух одноименных гимнографов – Степаноса Сюнеци I (V в.), согласно Тагмизяну, автора торжественных пасхальных гимнов, и Степаноса Сюнеци II (+ 735 г.), автора "Толкования грамматики", переводчика и комментатора сочинений Дионисия Ареопагита и Немесия, упорядочившего также армянское Восьмигласие, – не имеет под собой реальной основы. В действительности, как показывает исследование, в истории армянской культуры известен лишь один Степанос Сюнеци, живший в VII-VIII вв. и являвшийся на самом деле автором торжественных пасхальных гимнов. В числе заслуг Степаноса Сюнеци – также внедрение в армянское духовное песнетворчество византийского гимнографического жанра "канон", упорядочение системы армянского Восьмигласия и применение первоначальной системы невменной (хазовой) нотации в Армении.

ONCE MORE ON THE QUESTION OF PERSONALITY OF STEPANOS SIUNETSI

ANNA AREVSHATYAN

S u m m a r y

Analyzing evidences given by Armenian medieval historians, works of famous armenologists and medievalist-musicologists the author of this article concludes that the hypothesis, once put forward by musicologist N. Tahmizian (see journ. "Echmiadzin", 1973, N 2) about the existence of two hymnographers, both called Stepanos Siunetsi, the first one (5th century), according to Tahmizian, being the author of solemn Easter Hymns and the second one (+735), author of a Commentary of Grammar, translator and commentator of Dionysius the Areopagite and Nemesius, is not based on any real fact. Actually, only one Stepanos Siunetsi is known in the history of Armenian medieval culture. He lived in the 7th–8th centuries and was the author of solemn Easter Hymns. He introduced the genre of Byzantine "canon" into Armenian hymnography, put in order the system of Armenian Oktoechos and applied the initial system of neum notation in Armenia.

Հափության քննութեան հիման վրա, համոզիչ կերպով ապացուցել է, որ վերջիններս, իրոք, տարբերվում են իրենց տաղաչափական և բովանդակային ստանձնահատկութիւններով և ստեղծվել են ավելի ուշ շրջանում (տե՛ս L. H a k o b y a n. The Versification of the Šarakan-hymns – REArm, 24, 1993): Գուցե հենց ա՞յդ հանդամանքը նկատի ունեն Անանուն խմբագրութեան հեղինակը դրելով «Ստեփաննոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց», ցանկանալով նշել, որ Ստ. Սյունեցին Ավագ Օրհնութիւնները կերտելիս հավատարիմ է մնացել Սուրբ թարգմանիչների առաջին խստաշունչ և վսեմ կցուրդների ընդհանուր ոգուն և ոճին, յուրովի հարստացնելով կցուրդի ժանրը, այդպիսով դառնալով ոսկեդարյան շարականագիրների թողած ավանդութիւնների արժանի շարունակողը: